



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2024Թ. ՀՈՒՆԻՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2024թ.




2024Թ.-Ի ՀՈՒՆԻՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- **Համաշխարհային տնտեսություն.** հունիսին ՀՀ գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության շարժընթացը պայմանավորող հիմնական գործոնը եղել է ծառայությունների ոլորտը: Արդյունքում, նախորդ ամսվա համեմատ, գործընկեր երկրներում գրանցվել են տնտեսական ակտիվության աճի ավելի դանդաղ տեմպեր, իսկ ՌԴ-ում՝ անկում: Նավթի և պարենային ապրանքների միջազգային գները մայիսի համեմատ աճել են, իսկ պղնձի գինը՝ նվազել:
- **Տնտեսության արտաքին հատված.** հունիսին արտահանման և ներմուծման աճի տեմպերը մնացել են գրեթե նույն մակարդակում: Նախորդ տարվա հունիսի նկատմամբ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.4%-ով, իսկ եվրոյի նկատմամբ նույն չափով արժևորվել է: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամի արժևորման տեմպը նախորդ ամսվա համեմատ թուլացել է՝ կազմելով 4.8%: ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է 9.3%-ով (մայիսին արձանագրվել էր 5.3% նվազում):
- **Տնտեսության իրական հատված.** տնտեսական ակտիվության աճի տեմպը հունիսին կազմել է 7.1%՝ մայիսի նկատմամբ արագանալով 1.9 տոկոսային կետով՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների աճի տեմպի արագացմամբ: 12 ամսյա գնաճը կազմել է 0.8%, իսկ բնականոն գնաճը՝ 0%:
- **Տնտեսության ֆինանսական հատված.** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ: Վարկերի ծավալների աճը կազմել է 19.4%, իսկ դրանց տոկոսադրույքները հիմնականում կայուն են եղել, մինչդեռ կարճաժամկետ և միջնաժամկետ պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են նվազել դրամավարկային պայմանների մեղմացման ազդեցությամբ:
- **Տնտեսության հարկաբյուջեային հատված.** հարկային եկամուտների աճի տեմպը կազմել է 6.3%, իսկ պետական բյուջեի ծախսերը աճել են 18.3%-ով: Հունիսին պետական բյուջեն ձևավորվել է հավելուրդով:

1. Միջազգային զարգացումներ: Հունիսին համաշխարհային տնտեսական ակտիվությունը դանդաղել է, սակայն շարունակում է որոշակի կայուն մակարդակ ապահովել՝ չնայած բարձր գնաճի և քաղաքական անորոշության պայմաններում գործարար վստահության նվազման միտմանը: Աճի պայմանավորող գործոններն են եղել ծառայությունների և մշակող արդյունաբերության ոլորտների աճերը: Հունիսին ԱՄՆ-ում գրանցված տնտեսական ակտիվության աճը, հիմնականում, պայմանավորված է եղել ծառայությունների ոլորտի առավել արագ աճով: Եվրագոտու տնտեսական ակտիվության աճը նախորդ ամսվա համար դանդաղել է. տնտեսական վերականգնման հիմնական շարժիչ ուժը շարունակել է մնալ ծառայությունների ոլորտը: Իսպանիան շարունակել է լինել Եվրագոտու ամենաարագ աճող տնտեսությունը: Աճի ավելի թույլ տեմպեր արձանագրվել են Գերմանիայում, Իռլանդիայում և Իտալիայում, իսկ Ֆրանսիայում անկում է գրանցվել՝ պայմանավորված մասնավոր հատվածի ակտիվության թուլացմամբ: Հունիսին ՌԴ-ում գրանցվել է տնտեսական ակտիվության անկում՝ պայմանավորված ծառայությունների ոլորտում գործարար ակտիվության անկմամբ՝ գրանցելով 2023թ. հունվարից ի վեր ամենացածր ցուցանիշը: Ծառայությունների ոլորտի անկմանը զուգահեռ, պահպանվել է մշակող արդյունաբերության ոլորտի աճը: Հունիսին շարունակվել է լրացուցիչ աշխատակիցների ներգրավումը, ընդ որում աշխատատեղեր ստեղծվել են տարբեր ոլորտներում: Հունիսին Չինաստանի տնտեսական ակտիվության աճը դանդաղել է՝

պայմանավորված ծառայությունների ոլորտի աճի կտրուկ դանդաղմամբ:



Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները



Հունիսին ԱՄՆ-ում գնաճը թուլացել է՝ կազմելով 3% (մայիսին՝ 3.3%)՝ պայմանավորված էներգակիրների ծախսերի աճի, ինչպես նաև բնակարանների և տրանսպորտի գնաճի դանդաղմամբ: Եվրագոտու գրանցվել է 2.5% գնաճ՝ պայմանավորված էներգակիրների, սննդամթերքի, ալկոհոլի և ծխախոտի գնաճի դանդաղմամբ, իսկ ծառայությունների և ոչ էներգակիր արդյունաբերական ապրանքների գնաճը կայուն է եղել: ՌԴ-ում գնաճի տեմպերի արագացում է դիտվել՝ պայմանավորված ապրանքների (մասնավորապես՝ սննդամթերքի) և ծառայությունների գների աճով: Չինաստանում գրանցվել է 0.2% գնաճ՝ պայմանավորված սննդամթերքի գների նվազմամբ, իսկ ոչ պարենային ապրանքների գները համեմատաբար կայուն են եղել:

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվել է իրականացվել զսպող քաղաքականություն. հունիսին կայացած որոշումների արդյունքում ԵԿԲ-ն տոկոսադրույքը իջեցրել է 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 4.25%՝ հիմնվելով գնաճի կանխատեսումների և ընթացիկ զարգացումների (2023 թվականի սեպտեմբերից ի վեր գնաճը նվազել էր ավելի քան 2.5 տոկոսային կետով) վրա: ԱՄՆ ԴԴՀ-ը տոկոսադրույքի մակարդակը պահել է անփոփոխ՝ 5.25 - 5.5%: ՌԴ կենտրոնական բանկը նույնպես շարունակել է քաղաքականության զսպող ուղղությունը՝ պահպանելով հիմնական տոկոսադրույքի 16% մակարդակը՝ պայմանավորված ապրանքներ և ծառայություններ արտադրելու կարողությունը գերազանցող ներքին պահանջարկի աճով: Տնտեսության վերականգնմանը նպաստելու նպատակով՝ Չինաստանի Ժողովրդական բանկը 10 բազիսային կետով նվազեցրել է վարկավորման տոկոսադրույքը՝ սահմանելով մեկ տարվա վարկավորման հիմնական դրույքաչափը 3.35% և հինգ տարվա վարկավորման հիմնական դրույքաչափը՝ 3.85%:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարկային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում





Նավթի և պարենային ապրանքների միջազգային գները նախորդ ամսվա նկատմամբ աճել են, համապատասխանաբար, 0.7 և 0.1%-ով, պղնձի գինը նվազել է 4.8%-ով: Չնայած Չինաստանի



տնտեսության առկա վիճակի և հեռանկարների վերաբերյալ անորոշություններին և նավթի պահանջարկի աճի դանդաղմանը՝ նավթի գներն աճել են: Սա պայմանավորված է եղել ՕՊԵԿ+ -ի վերջին հայտարարությամբ, ըստ որի աշխարհաքաղաքական բարձր ռիսկերի պայմաններում արտադրության կամավոր կրճատումները կախված կլինեն շուկայական պայմաններից: Նավթի միջազգային գնի աճին նպաստող մյուս գործոնը եղել է թուլացող ԱՄՆ դոլարը: Հունիսին պղնձի միջազգային գնի կտրուկ անկումն առավելապես պայմանավորված է եղել առաջատար սպառող համարվող Չինաստանի պահանջարկի նվազմամբ:


Պարենային ապրանքների համաշխարհային գինը նախորդ ամսվա համեմատ աճել է 0.1%-ով՝ պայմանավորված կաթնամթերքի, բուսական յուղերի և շաքարավազի գների աճով. աճի դանդաղումը պայմանավորված է եղել հացահատիկի միջազգային գնի կտրուկ անկմամբ:

Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ



2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2024թ. հունիսին նախորդ ամսվա համեմատ արտահանման և ներմուծման աճի տեմպերը մնացել են գրեթե նույն մակարդակում: Հունիսին արտահանումն աճել է 59.9%-ով (նախորդ ամսվա աճը՝ 58%), որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ԱՄԷ արտահանումը: Ներմուծումն աճել է 20.6% (նախորդ ամսվա աճը՝ 18.5%):


Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միջուկայինները, մլն դոլար



Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսներին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի նվազում 5.7%-ով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, որին ամենամեծ


նպաստումն է ունեցել ՌԴ-ից այցելած զբոսաշրջիկների 23.6% նվազումը: 2024թ. հունիսին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը նվազել է 9.3%-ով (մայիսին 5.3%):

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից և այլ երկրներից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը




Շարունակվել է դրամական փոխանցումների նախորդ տարվա նվազման միտումները: 2024թ. մայիսին ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նախորդ տարվա մայիսի համեմատ նվազել են շուրջ 44.3%-ով՝ պայմանավորված հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 64.3% նվազմամբ:

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը հունիսին ռուբլու և եվրոյի նկատմամբ արժևորվել է, իսկ դոլարի նկատմամբ պահպանել է արժեզրկման միտումը: Մասնավորապես՝ հունիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.4%-ով: Եվրոյի նկատմամբ դրամը արժեզրկվել է 0.4%, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ 4.8%-ով:

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվության աճի տեմպը հունիսին կազմել է 7.1%՝ մայիսի նկատմամբ արագանալով 1.9 տոկոսային կետով՝ պայմանավորված ծառայությունների աճի տեմպի արագացմամբ: Արդյունքում՝ հունվար-հունիսին գրանցվել է տնտեսական ակտիվության 10.4% աճ: Արդյունաբերության՝ նախորդ տարվա նոյեմբերից սկիզբ առած բարձր աճի տեմպերը ապրիլից սկսել են կտրուկ տեմպերով դանդաղել՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների արտադրության նվազմամբ, որին որոշ չափով հակազդել են ապրիլից հիմնային մետաղների¹

¹ 2024թ. ապրիլ ամսվա հաշվետվության ներկայացման ժամանակ ՀՀ ՎԿ-ն ճշգրտել է նախորդ երեք ամիսների արդյունաբերության արտադրանքի ծավալների տվյալները՝ կապված տնտեսական գործունեության տեսակների 24 (հիմնային մետաղների արտադրություն) և 32 (արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում, այդ թվում՝ ոսկերչական արտադրանքի


արտադրություն) ծածկագրերով հատվածների միջև վերադասակարգման հետ, ինչով պայմանավորված վերանայվել են նաև նախորդ երեք ամիսների արդյունաբերության ցուցանիշները:




արտադրության առաջանցիկ աճերը: Այնուամենայնիվ հունվար-հունիսին արդյունաբերությունը շարունակել է հանդիսանալ ՏԱՀ-ի աճն ապահովող հիմնական ճյուղերից մեկը, որին հաջորդել են առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտները:

Հունվար-մայիսի տվյալներով արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել հիմնային մետաղների արտադրության աճով, շինարարության աճն ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ բնակչության և պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության աճերով (աճը զսպող հիմնական գործոնը եղել է կազմակերպության միջոցներով իրականացվող շինարարության անկումը), ծառայությունների աճը՝ հիմնականում ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով, իսկ առևտրի աճին հիմնականում նպաստել է մեծածախ առևտրի աճը:

Գծապատկեր 3.1. ՏԱՀ և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)




Գծապատկեր 3.2. ՏԱՀ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուրսակային, %)



Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.4%-ով՝ կազմելով 276,889 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 9.9%-ով՝ կազմելով 211,735 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 5.3%-ով՝ կազմելով 302,828 դրամ): Իրական աշխատավարձը 0.3% գնաճի պայմաններում աճել է 6.1%-ով:

Մայիսին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 4.2%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել՝ շուրջ 4.9%-ով, կազմելով 757,709 մարդ՝ պայմանավորված հիմնականում առևտրի, կրթության և շինարարության ոլորտներում աշխատողների թվի աճով:

Գծապատկեր 3.3. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)




ՀՀ անշարժ գույքի շուկայում մայիս ամսին գները շարունակել են աճել, չնայած աճի տեմպը ապրիլի նկատմամբ դանդաղել է: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը ապրիլի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -0.3-ից 0.3% շրջանակներում, իսկ նախորդ տարվա մայիս ամսվա նկատմամբ՝ 6.1-ից 12.0% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 907,300 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 227,500 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը ապրիլի

համեմատ տատանվել է -1.6-ից 1.5% շրջանակներում, իսկ նախորդ տարվա մայիս ամսվա նկատմամբ՝ -1.7-ից 22.9%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 446,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 26,500 դրամ):


4. Դրամավարկային քաղաքականություն: Հունիսին ՀՀ սպառողական շուկայում տարվա առաջին ամիսների գնանկումային միտումներից հետո ձևավորվել է թույլ գնաճային միջավայր: 12 ամսյա գնաճը կազմել է 0.8%, թեպետ բնականոն գնաճը կազմել է 0%, իսկ միջին գնաճը տարսկզբից՝ -0.6%: Հունիսին ՀՀ ԿԲ-ը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 8%:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը (ամսական միջին)



12 ամսյա գնաճը շարունակել է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի գնաճի բացասական (-0.3 տոկոսային կետ) նպաստմամբ, որին հակակշռել են ծառայությունների և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների դրական նպաստումները՝ համապատասխանաբար՝ 0.9 և 0.2 տոկոսային կետերով:


Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ



5. Ֆինանսական միջնորդություն: Հունիսին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ բնորոշվելով նաև ավանդների նկատմամբ վարկերի առաջանցիկ աճով: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա նույն ամսվա, վարկերի ծավալների աճը (19.4%) գերազանցել է ավանդների ծավալների աճին (11.9%): Ընդ որում, ռեզիդենտների վարկերի աճը կազմել է 20.3%, իսկ ռեզիդենտների ավանդների աճը՝ 14%: Վարկերի բարձր աճը ըստ ոլորտների շարունակել է ընդգրկուն լինել. ամենաբարձր նպաստումը շարունակել են ապահովել սպառողական (նպաստումը՝ 6.9 տոկոսային կետ, աճը՝ 29.5%), հիփոթեքային (նպաստումը՝ 5.3 տոկոսային կետ, աճը՝ 22.5%), վարկերը, սակայն տնտեսության ոլորտների (բացառությամբ արդյունաբերության) վարկավորումը ևս աճում է հիմնականում բարձր տեմպերով: Առաջանցիկ վարկավորման արդյունքում ավանդների և վարկերի ծավալների դրական տարբերությունը հունիսին որոշակի նվազել է՝ կազմելով 330 մլրդ դրամ (2022թ.-ի վերջին այդ տարբերություն կազմել էր 913 մլրդ դրամ, 2023թ.-ի վերջին՝ 527 մլրդ դրամ): Ոչ ռեզիդենտների ավանդներն աճել են շուրջ 71 մլրդ դրամով (5.4% աճ)՝ նախորդ տարվա նույն ամսվա, և նվազել շուրջ 64 մլրդ դրամով՝ մայիսի նկատմամբ: Ոչ ռեզիդենտների ավանդները շարունակում են պահպանվել պատմականորեն բարձր մակարդակում (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 507 մլրդ դրամով):




Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %




ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները հունիսին շարունակել են նվազել, իսկ վարկերի և ավանդների տոկոսադրույքները հիմնականում անփոփոխ են: Հունիսին, մեծապես պայմանավորված դրամավարկային պայմանների մեղմացման ազդեցություններով, պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են: Ընդ որում, նվազումը տեղի է ունեցել եկամտաբերության կորի կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածներում: Վարկերի և ավանդների տոկոսադրույքները ընդհանուր առմամբ շարունակել են գտնվել իրենց միջին մակարդակների շրջանակներում, կայունացել են նաև հիփոթեքային և սպառողական վարկերի տոկոսադրույքները:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %




6. Հարկաբյուջետային հատված²: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը հունիսին շարունակել է չափավոր լինել: 2024թ.-ի հունիսին հարկային եկամուտները կազմել են 203.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա հունիսի նկատմամբ աճելով 6.3%-ով: 2024-ի հունվար-հունիս ամիսներին հարկային եկամուտները կազմել են 1,187.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 5.3 %-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %



Հունիս ամսվա հարկային եկամուտների աճի աղբյուրները եղել են եկամտային հարկը, բնապահպանական և բնօգտագործման վճարներն ու շահութահարկը՝ համապատասխանաբար 3.1, 2.7 և 1.8%-ային կետ նպաստումներով: Բացասական նպաստում են ունեցել ավելացված արժեքի հարկը (0.8%-ային կետ), ակցիզային հարկը (0.6%-ային կետ) և մաքսատուրքը (0.3%-ային կետ):


Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Հունիս ամսին աճել են և՛ եկամուտները, և՛ ծախսերը, սակայն ծախսերի աճը առաջանցիկ է եկամուտների համեմատ: Հունիս ամսին պետական բյուջեի եկամուտները կազմել են 214.7 մլրդ դրամ (աճը՝ 4.4%), իսկ ծախսերը՝ 203.7 մլրդ դրամ (աճը՝ 18.3%): Ծախսերը ընդգրկել են 165.8 մլրդ դրամի ընթացիկ և 37.8 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ (կապիտալ ծախսերը կազմել են 40.0 մլրդ դրամ): Ընթացիկ ծախսերը նախորդ տարվա հունիսի համեմատ աճել են 11.9%-ով, իսկ կապիտալ ծախսերը աճել են 64.9%-ով:

2024-ի հունվար-հունիս ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են 1,243.7 մլրդ դրամը (աճը՝ 5.0%), իսկ ծախսերը՝ 1,232.7 մլրդ դրամ (աճը՝ 17.4%):

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեն հունվար-հունիս ամիսներին եղել հավելուրդային, թեպետ ձևավորված հավելուրդը զգալիորեն զիջել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հունիս ամսին ծախսերը եկամուտներին գերազանցել են 11.0 մլրդ դրամով՝ նույնական ցուցանիշ ապահովելով հունվար-հունիսի ամիսների համար: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեի հավելուրդը կազմել էր 134.3 մլրդ դրամ:

² Հարկային եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես հաշվետու, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների համար: